ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
STATE ACADEMY OF FINE ARTS OF ARMENIA

0009, Հ.Հ, ք. Երևան , Իսահակյան 36
36 Isahakyan str, Yerevan, 0009, Republic of Armenia

Հեռ./Tel. (+374 10) 56 07 26
Ֆաքս./Fax (+374 10) 54 27 06
Էլ.-փոստ/E-mail: yafa@yafa.am ; info@yafa.am

159 «25» 09 2025թ

«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Տեղեկացնում եմ այն մասին, որ «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կողմից կազմակերպված ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում 01.09.2025 թվականի թիվ 3 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշեց 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊ ընկերությանը ճանաչել ընտրված մասնակից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի Պատվիրատուն 05.09.2025 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով /e-Auction/ ծանուցել է «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊ ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը:

Սակայն Ձեր ընկերությունը պայմանագրի նախագիծը ստանալուց հետո «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետում /5 աշխատանքային օր/ չի ստորագրել պայմանագիրը և կցել էլեկտրոնային համակարգ և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/18 ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինները հայտարարվում են չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի՝ պայմանագիր չկնքվելու հիմքով :

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊ ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց :

ՌԵԿՏՈՐ՝ **ՎԱՐԴԱՆ ԱԶԱՏՅԱՆ**